պատրիարքարանից։ Պատրիարքարանը ի դէմս տեղապահ Գէորգիանեան եպիսկոպոսի բերանացի հաւաստիացումներ է տալիս, թէ ամբաստանութիւն չէ եղել։ Վարդապետները պահանջում են գրաւոր հերքում, իսկ այդ հերքումն զլացուում է։ Այդ երեք վարդապետները. ազգ. երեսփոխանական ժողովի անդամ էլ են։ Ամբաստանութեան կէտերն են

1, որ առանձինն՝ ինչպէս նաև ժողովների մէջ պատրիարքարանի խնդիրներին միջամուխ են լինում. 2, որ տեղապահի անձին հակառակ են խօսում. 3. որ ժողովրդի հոգին յուզում են և 4. որ եկեղեցական իշխանութեան հակառակում են։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

Церк. вѣст.

Ս. Պ. Բուրգի հոգեւ. ճեմարանի 100 ամեակը։ Հոգեւոր ճեմարանի նոր կանոնադրութիւն։ Պրաւօսլաւ եկեղեցուց անջատուածներ.

Պրաւօսլաւ եկեղեցական կեանքում նշանաւոր դէպք Ս. Պետերբուրգի հոգեւոր ճեմարանի հարիւրամեակի յոբելեանն է, որ տօնուեց անցեալ դեկտեմբերի 17-ին,

Հոգեւոր ճեմարանը իւր հարիւրամեայ գործունէութեան մէջ տուել է բազմաթիւ բարձրաստիճան հոգեւորականներ, քահանաներ, գիտնականներ, հասարակական գործիչներ։ Церковный Вѣстникъ չաբաթաթերթի 50–51 համարի առաջնորդողները, որ նուիրուած են ճեմարանի հարիւրամեակին, թուելով ճեմարանի մատուցած ծառայութիւնները եկեղեցուն և ընծայած նշանաւոր անձերի անունները,—վերջանում են հետեւեալ բառերով.

«Եւ ահա, անցեալ դարի այսպիսի պատմական ժառանգութեամբ, այսպիսի գործիչներով անցեալում և ներկայումս մեր ճեմարանը այժմ տօնում է իւր գործունէութեան առաջին հարիւրամեակը. փառք և պարծանք նրան»։

Որքան և այս այսպէս, սակայն ռուս պահպանողական լրագրները շատ էլ գոհ չեն ձեմարանով. նրանք քննելով ձեմարանը եզրակացնում են որ ձեմարանի սաները ոչ այնքան նուիրուած են եղել եկեղեցու փառքին ու պայծառութեանը, որքան իրանց անձնական շահերին, ձգտումն ունենալով մի միայն արդիւնաւոր պաշտօնների և բարձր աստիճանների տիրանալ։

—Հոգևոր ձեմարանների կանոնադրութիւն մշակող ցանձնաժողովը վերջացրել է իւր աշխատանքը և արդիւնքը բացատրական զեկուցման հետ ներկայացրել է Սրբ. Սինոդին, որը ցանձնաժողովի անդամների հետ մի քանի նիստեր կը կազմի, առաւել ևս լուսաբանութիւններ ստանալու համար։

Ներքին գործոց նախարարութեան հաւաքած տեղեկութեամբ երևում է որ 1909 թուին պրաւոսլաւ եկեղեցուց անջատուել և յարել են

Կաթոլիկութեան	233,000	հոգի
արևմտեան նահանգներում մօտ	62,000	»
Բողոքական են դարձել	14,500	»
որոնցից պրեբալտեան նահանգում 12,000		»
Մահմեդականութիւն են ընդունել	50,000	հոգի
որից 49,000 Եւրոպական Ռուսիայի արևելեան մասում։		
Բուդդայականութեան յարել են	3,400	»
Հրէութիւն են ընդունել մինչև	400	»
և կռապաշտ են դարձել մօտ	150	»

Պրաւոսլաւ եկեղեցուց այս անջատումն սկսուել է, ասում է Церк. Вѣст., 1905 թ. ապրիլի 17-ից, երբ հրատարակուեց դաւանութեան ազատութիւնը։

Այս տեղեկութիւնը հարկաւոր է համարում Церк. Вѣст. ի նկատի ունենալով դաւանութիւնների, ընդ որս և պրաւոսլաւիէի վերաբերութեամբ նոր օրէնքների մշակութիւնը։

Յունվարի 25-ին ինչպէս հաղորդում են լրագրները,

Թիֆլիս է ժամանել Վրաստանի Էկզարխ Իննովկենտիոս Արքեպիսկոպոսը և ընդունուել է պրաւոսլաւ վրացի հոգեւորականութեան, կառավարութեան և քաղաքի կողմից մեծ շքով և հանդիսաւորութեամբ։ Նորին Բարձր Սրբազնութիւնը առաջնորդուել է Վրաց Սիոն մայր եկեղեցին, ուր խոնուած է եղել մեծ բազմութիւն։ Այստեղ, ինչպէս գրում է Մշակը, Իննովկենտիոս սրբազանը իւր ճառի մէջ յայտնել է, որ Կովկասի բոլոր ազգութիւնները հաւասար են իւր առաջ։ Նա եկել է խաղաղութեան և սիրոյ պատգամներով, հաշտութեան ձիթենու ճիւղը ձեռքին և իւր բոլոր ջանքերը նուիրելու է հանգստութիւն մտցնելու հոգեւոր դասի աջակցութեամբ Վրաստանի աղեկոծուած կեանքում...»

Թիֆլիզի հայ առաջնորդարանի կողմից Սրբազան Էկզարխի գալուստը շնորհաւորել է կոնսիստորի նախագահ Եփրեմ վարդապետը երկու աւագ քահանաների ընկերակցութեամբ։

Սրբազան Էկզարխը իւր պաշտօնական առաջին այցելութեան ժամանակ այցելել է Հայոց առաջնորդին և մահմեդականների մուֆթիին։

Այս, մի տէրութեան հպատակ այլակրօն ազգութիւնների մէջ կրօնական համերաշխութիւնը և քրիստոնէական սէրը առաջին դրականն է հայրենիքի խաղաղ բարգաւաճման, և ուրախ ենք, որ Սրբազան Իննովկենտիոսը համերաշխութեան և սիրոյ առաջին կարապետն է լինում պրաւոսլաւ բարձր հոգեւորականութեան մէջ։

Շնորհաւորում ենք Նորին Բարձր—Սրբազնութեան գալուստն ու պաշտօնավարութիւնը Կովկասում, որ այնքան պէտք ունի խաղաղասէր պաշտօնեաների։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

—Անգլիական եկեղեցին այժմ զբաղուած է երկու խնդրով.

1) Աթանասեան հանգանակի պաշտպանութեամբ,

2) Արևելեան օրթոդոքս և պրաւոսլաւ եկեղեցիների հետ միութիւն հաստատելու խնդրով։

Ոմանք ձգտում են ամանասեան հանգանակը ժամերգութեան կարգից հանել, առարկելով թէ նա սկզբում և վերջում հռչակում է, որ նրա մէջ բովանդակուած ընդհանրական (կաթուղիկէ) հաւատը անհրաժեշտ է փրկութեան համար։ Թիւրիմացութիւնները հերքելու համար կատարուել է նոր թարգմանութիւն լատինական բնագրից, որն և եղել է պատճառ հանգանակը պաշտպանողներին, նոյեմբերի 4-ին (ն. տ.), Կէնտրբերիում յատուկ ժողով կազմել, ուր միաձայն վկայուել է, որ հանգանակը անհրաժեշտ է, որպէս հաւատոյ գիտելիքները բովանդակող մի դոկումենտ, որ Ե. դարից հետէ գոյութիւն ունի։

Նոյեմբերի 17-ին (ն. տ) մի նոյնպիսի ժողով կազմուել է Լոնդոնում, ուր առաջին ճառախօս լորդ Խալիֆաքսը պաշտպանել է հետևեալ երեք կէտերը,

Եկեղեցու պարտքն է 1. Ցոյց տալ ճշմարտութիւնը.

2, Մարդուս համար կաթուղիկէ հաւատի անհրաժեշտութիւնն ու կարիքը և հաւատից հեռանալու վտանգը.

3, Մասնաւոր եկեղեցիք իրաւունք չունին դիպչելու այն բանին, որը եկեղեցու լրութեան մէջ հեղինակաւորութիւն է։

—Հոկտեմբերի 20-ին (ն. տ.) Լոնդոնում Սիոն-կոլեջում տեղի է ունեցել «Անգլիական և պրաւոսլաւ եկեղեցիների միութեան» տարեկան 3-րդ ժողովը։ Նախապէս Ս. Ալբան եկեղեցում հանդիսաւոր պատարագ է եղել։ Ժողովին նախագահել է Ս. Ալբան եկեղեցու փոխանորդը. բազմաթիւ ճառեր են արտասանուել։ Համոզում է կազմուել, որ անգլիական գաղթավայրերում գտնուած օրթոդոքս—պրաւոսլաւների հոգևոր պէտքերը հոգալու համար հարկ է պատրաստել նոյն դաւանութեան հոգևորականներ, հնարաւորութիւն տալով նրանցից մի քանիսին անգլիական համալսարանի դասընթացքը անցնել Լոնդոնի կոլեջում, և ուղարկել գաղթավայրերը։ Ուսանողների ծախքը մօտ 400 ֆունտ ստերլինգ 3—4 տարուայ համար տալ ամեն մէկին յատուկ կազմուած «խորհրդի» ձեռքով։ Ժողովի օրը պատարագին այս նպատակով դանձանակ են շրջեցրել։

Այս ծրագրին հաւանութիւն են տուել արդէն Կ. Պոլսոյ տիեզերական պատրիարքը և Կորֆուի ու Աթէնքի արքեպիսկոպոսները։

ԱՖՐԻԿԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ

Քրիստոնէութիւնն եւ եւրոպական կուլտուրան նեգրերի մէջ։

Ոչ շատ հեռաւոր ժամանակներում, 30 տարի առաջ հարաւ արևմտեան Աֆրիկան, որ կոչւում է ստրուկների ափ, անթափանցելի անտառ էր ու անմարդաբնակ անապատ։ Ոչ մի տեղ ճանապարհ չկար և հաղուագէպ կարաւանները երթևեկում էին անյարմար շաւիղներով։ Բնիկները երկրագործութեամբ համարեա չէին զբաղւում։ Նեգր ցեղերի մէջ կատարելապէս թագաւորում էին սնահաւատութիւնն ու անկրթութիւնը։ Բնակիչները մեծ մասամբ կենդրոնացած էին մեծ գիւղերում, ընդարձակ տարածութիւններ անմարդաբնակ թողնելով։ 1865 թուին առաջին անգամ այստեղ երևացին եւրոպական միսիոներներ (քարոզիչներ), իսկ 20 տարուց յետոյ արդէն վայրենի ցեղերը կերպարանափոխուեցին։ Կուռական անտառները կիսով չափ կտրտուել էին, ամեն տեղ շինուած էին երկաթուղիներ և խճուղիներ։ Վաճառականութիւնն ու եւրոպական քաղաքակրթութիւնը ամեն տեսակ քրիստոնէական դաւանութիւնների քարոզիչների ջանքերի հետ փոխեցին տեղացիների կեանքի պայմանները մինչև անգամ երկրի «Ստրուկների ափ» կոչումը այլ ևս չէր յիշւում. այլ նրա տեղ երևաց երկրի արևմտեան մասի համար՝ Դագոմէ և արևելեան մասի համար՝ Հարաւային Նեգրիա անունը։

Խօսելով նեգրերի մէջ քաղաքակրթութեան ներմուծման մասին պէտք է ասել, որ նրա առաջին քայլերը շատ տատասկոտ էին։ Շատ նեղութիւններ կրեցին, մինչև սովորեցրին նեգրերին իրանց ջանքը գործ դնել այնպիսի բաների վերայ, որպիսի են խճուղիները յատակելը կարծրաքարով, հեռագրի և էլէքտրական լապտերների սիներ անկել։

Բայց այնու ամենայնիւ եւրոպացիները կարողացան ազդել վայրենիների վերայ և վերջիններս սկսել են յարաբերութեան մէջ մտնել եւրոպացիների հետ։ Նրանց մի քանի դեսերի և լճերի վրայ շինուած են շոգենաւեր. ափերին գտնւում են առևտրական կայաններ. բազմաթիւ զանազան տեսակ նաւերը փոխադրում են տեղական ապրանքներ, որոնք ծովով ուղարկում են Եւրոպա։ Նաւամատոյցներն ու նաւահանգիստները դարձան աւելի մարդաբնակ։ Բնիկների զարգացումն շատ նպաստում է այստեղ աշխարհիկ և միսիոներական դպրոցներ բանալուն։ Եւրոպական քաղաքակրթութեան բարերար ազդեցութեանը պէտք է վերագրել, որ բնիկները թողին մարդաղոհի և մանկապանութեան սովորութիւնները, անհետանում են ճակատագրի պաշտամունքները. դողութեան համար ձեռքը կտրելու տեղական պատիժը բաւական մեղմացել է։

Քրիստոնէութեան ազդեցութեան շնորհիւ թուլանում և ընկնում է կախարդների և նետ դնողների իշխանութիւնը։ Ընդհանրապէս քրիստոնէութեան բարոյական սկզբունքները մեղմացրել են բարքերը, բայց միսեոներների ջանքերը արգելքի են հանդիպում ոչ միայն նեգրերի, այլ և մահմեդականութեան կողմից, որ տարածուած է Աֆրիկայի հիւսիսում և թափանցում է նրա ներսը։

Ուշադրութեան արժանի է, որ եւրոպացի կոյսերի օրինակը ունենում է հետևողներ. այսպէս, Աֆրիկայի կենդրոնում, Տանգանայիկա լճի մօտերքում կազմուել է տեղացի սև քոյրերի ընկերութիւն։ Սև քոյրերը երախտագիտութեամբ են վերաբերւում դէպի իրանց եւրոպացի դաստիարակները և աշխատում են ամեն բանում նրանց նմանուել։ Սև քոյրերի անկեղծ հաւատը և եռանդը հարկադրում են միսեոներներին զանազան դէպքերում դիմել նրանց, և նրանք չեն հրաժարւում քարոզութեամբ պարապել տեղացի կանանց մէջ, որոնց սովորութիւններն ու բարքերը իրանց լաւ ծանօթ են։

Եւրոպացի կոյսերը միսիոների պարտք են կատարում բացի յիշատակեալ տեղերից նաև Զամբեզի վերին մասերում։

Այսպէս միսիոներների գործունէութիւնը ընդհանրապէս, և քրիստոնեայ կանանցը ի մասնաւորի՝ նպաստելով նեգրերի արտաքին կացութեան բարւոքմանը բարձրացնում են և նրանց ներքին, հոգեկան վիճակը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

II

Հայի անցեալի եւ ներկայի մասին տեսութիւն

Թուրք – Թաթարները

Խօսենք այժմ Հայաստանում ապրող Թուրք-Թաթարական տարրի մասին։

Ամենահին ժամանակներից Ասիան բռնած են եղել երեք ցեղեր, որոնք գանգի, դէմքի, տիպի և ուրիշ մի քանի առանձնայատկութիւններով միմեանց հակառակ ոյժ են ներկայացրել և բնութեան տարրերի—քամու, կրակի, հեղեղի նման անցել են մի երկրից միւսը և տեղական ազդաբնակութեանը կամ բնաջինջ են արել կամ ձուլուել հետը։ Այդ երեք ցեղերն են.

1) Կովկասեան, որ և տիրապետող է հանդիսացել ամենահին ժամանակներից մերձաւոր արևելքին կամ Առաջաւոր Ասիային և Եւրոպային։ Այդ ցեղն է ստեղծել արդի եւրոպական քաղաքակրթութիւնը։

2. Մոնղոլական, որ տիրապետող է հանդիսացել Հեռաւոր Ասիային և ստեղծել է բուն չինական կամ ասիական քաղաքակրթութիւնը։

3) Մալայեան, որ բնակում է Մալայեան թերակղզում և ոչ մի համաշխարհային դեր չէ խաղացել։

Մարդկութեան այդ երեք ցեղերից երրորդը Մալայեանը իւր փոքր թուով և խաղացած չնչին դերով, մի կողմ է ընկած։ Գլխաւոր գործող և դեր խաղացողը նախ՝ կովկասեան ցեղն է իւր հնդ-եւրոպական և սեմիտական ճիւղերով։ Նրանք տուել են մարդկութեան մեծագոյն մասին կրօն և քաղաքացիական օրէնքներ և ունենալով կենսունակութեան ոյժ՝ տիրապետում են